Նախագիծ

«ՀԱՍԱՐԱԿԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ»

ԱՌԱՐԿԱՅԻ ԾՐԱԳԻՐ

(8-9-րդ դասարաններ)

ԵՐԵՎԱՆ 2011

ԲԱՑԱՏՐԱԳԻՐ

Միջին դպրոցում հասարակագիտության դասավանդման հիմնական խնդիրներն են՝

- ծանոթացնել մարդուն և հասարակությանը վերաբերող հիմնական հասկացություններին, հայեցակարգերին, հիմնախնդիրներին,
- ներկայացնել աշխարհի միասնականության ու բազմազանության գաղափարը,
- ներկայացնել մարդու բարոյահոգեբանական զարգացմանը վերաբերող հիմնական հասկացությունները,
- զարգացնել մտահանգումներ կատարելու, վերլուծելու, համեմատելու և այլ մտածական կարողություններ,
- գաղափար տալ միջանձնային հարաբերությունների մասին, զարգացնել հաղորդակցվելու հմտություններ,
- ներկայացնել որոշ հիմնարար հասկացություններ, ինչպիսիք են՝ ազատությունը, պատասխանատվությունը, արդարությունը և այլն, զարգացնել ազատ, պատասխանատու, հանդուրժողական լինելու հմտություններ և արժեքներ,
- ծանոթացնել մարդու իրավունքների գաղափարին, ներկայացնել մարդկության պայքարը մարդու իրավունքների պաշտպանության համար,
- ներկայացնել իրավունքների տեսակները և դրանցից յուրաքանչյուրի նշանակությունը անհատի և հասարակության լիարժեք կյանքի համար,
- գաղափար տալ մարդու իրավունքների պաշտպանության ներպետական և միջազգային մեխանիզմների և երաշխիքների մասին,
- ծանոթացնել իշխանության, ժողովրդավարության և քաղաքացիական հասարակության գաղափարներին, ներկայացնել դրանց փոխադարձ կապը,
- վերլուծել քաղաքացիական հասարակության կառուցվածքն ու տարբեր ինստիտուտների (ՁԼՄ-ներ, ՀԿ-ներ և այլն) դերը քաղաքացիական հասարակության կայացման գործում,
- համայնքային հիմնախնդիրների հետազոտման նախագծերի միջոցով ձևավորել գործուն մասնակցության և առաջնորդության ունակ քաղաքացիներ:

Ծրագրում ընդգրկված բոլոր թեմաների դասավանդման ընթացքում կարող են կիրառվել գործնական աշխատանքի եղանակներ:

<<Հասարակագիտություն>> առարկայի դասավանդմանը 8-9-րդ դասարաններում հատկացվում է շաբաթական մեկ ժամ, տարեկան 34 ժամ, ընդամենը 68 ժամ:

8-րդ դասարան

Հասարակագիտության ներածություն

Ներածություն (1 ժամ)

Թեմա 1. Բնություն, մարդ և հասարակություն (2 ժամ)

Բնություն և մարդ: Մարդ և հասարակություն: Հասարակությունը և բնության պահպանությունը:

Թեմա 2. Մարդու հիմնական հատկությունները (4 ժամ)

Անհատ, անձ, անհատականություն: Մարդու սեռը: Սեռային դերեր և տարբերություններ: Մարդու տարիքը. մանկություն, պատանեկություն, երիտասարդություն, հասուն տարիք, ծերություն: Աշխարհընկալումը տարբեր տարիքներում: Հարգանք տարբեր տարիքի, սեռի մարդկանց հանդեպ: Մարդը՝ որպես կատարելագործվող էակ:

Թեմա 3. Մարդը՝ որպես բանական էակ (3 ժամ)

Ճանաչողության աստիճանները: Զգայություն, ընկալում, մտապատկեր (պատկերացում): Հասկացություն, դատողություն և մտահանգում: Կարծիք, փաստ, գիտելիք, համոզմունք:

Թեմա 4. Մարդը՝ որպես հասարակական էակ (5 ժամ)

Գաղափար հասարակական կյանքի ոլորտների (նյութական, հոգևոր, քաղաքական, սոցիալական) մասին: Տնտեսության դերը հասարակական կյանքում: Փոքր և մեծ խմբեր: Ընտանիք և հասարակություն: Սեր, ընկերություն: Մշակույթ: Ինքնություն: Հաղորդակցություն: Հաղորդակցման դժվարությունները: Արդյունավետ հաղորդակցում: Հաղորդակցության ժամանակակից միջոցներ:

Թեմա 5. Համամարդկային արժեքներ (5 ժամ)

Գաղափար արժեքների մասին: Մարդը՝ որպես արժեք: Մնայուն և անցողիկ արժեքներ: Հոգևոր և նյութական արժեքներ: Գեղեցիկն ու բարին՝ որպես արժեք: Ազատություն: Հանդուրժողականություն: Արդարություն: Պատասխանատվություն: Առողջություն:

Կրկնություն (1 ժամ)

Մարդու իրավունքներ (մաս I)

Թեմա 6. Մարդու իրավունքներ հասկացությունը (4 ժամ)

Մարդու իրավունքներ և ազատություններ: Մարդու իրավունքների բարոյական հիմքերը: Մարդու իրավունքների և ազատությունների իրավական բնույթը: Մարդու իրավունքներ հասկացության ծագումը և իրավունքների <<սերունդները>>: Իրավունքների, պարտականությունների և պատասխանատվության կապը: Անհատ և պետություն: Քաղաքացիություն հասկացությունը: Մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության պետության պարտականությունը:

Մարդու իրավունքներին վերաբերող հիմնարար միջազգային փաստաթղթեր: ՀՀ Սահմանադրությունը՝ որպես մարդու իրավունքների աղբյուր:

Թեմա 7. Մարդու և քաղաքացու իրավունքներն ու ազատությունները (4 ժ.)

Մարդու քաղաքացիական իրավունքներ ու ազատություններ. հասկացությունը և էությունը: Մարդու քաղաքացիական իրավունքներն ու ազատությունները և մարդասիրական ու բարոյական արժեքները:

Քաղաքական իրավունքներ ու ազատություններ. հասկացությունը և էությունը: Քաղաքական իրավունքների ու ազատությունների պաշտպանությունը:

Մարդու և քաղաքացու տնտեսական ու սոցիալական իրավունքներ. հասկացությունը և էությունը:

Մարդու մշակութային իրավունքներ. հասկացությունն ու էությունը: Մշակութային իրավունքները որպես մարդու հոգևոր զարգացման երաշխիք:

Ամփոփում (2 ժամ)

Պահուստային ժամաքանակ՝ 3 ժամ

9-րդ դասարան

Մարդու իրավունքներ (մաս II)

Թեմա 1. Առանձին խմբերի անձանց իրավունքներ (3 ժամ)

Երեխայի իրավունքները: Երեխայի իրավունքների մասին ՄԱԿ-ի Հռչակագիրը և Կոնվենցիան: ՀՀ Սահմանադրությունը երեխայի իրավունքների մասին, Երեխայի իրավունքների մասին ՀՀ օրենքը:

Կանանց իրավունքները: Կանանց իրավունքների ամրագրումը միջազգային փաստաթղթերում և ՀՀ օրենսդրության մեջ: Կանանց և տղամարդկանց իրավահավասարությունը: Մայրության պաշտպանությունը:

Հաշմանդամների իրավունքները: Ազգային փոքրամասնությունները Հայաստանում: Ազգային փոքրամասնությունների մասին միջազգային փաստաթղթերը:

Թեմա 2. Մարդու իրավունքների երաշխիքները և պաշտպանությունը (8 ժամ)

Մարդու իրավունքների երաշխիքները. հասկացությունը և տեսակները: Մարդու իրավունքների և ազատությունների սահմանադրական ընդհանուր երաշխիքները: Մարդու իրավունքների և ազատությունների դատական պաշտպանությունը: Մարդու իրավունքների և ազատությունների սահմանադրական հատուկ երաշխիքները: Մարդու իրավունքների պաշտպանը:

Մարդու իրավունքների պաշտպանությունը և Միավորված ազգերի կազմակերպությունը: Միջազգային դատարան: Մարդու իրավունքների պաշտպանության եվրոպական համակարգը: Կարմիր խաչի միջազգային կոմիտե:

Իրավապաշտպան կազմակերպություններ հասկացությունը և դրանց գործունեության ուղղությունները: Միջազգային իրավապաշտպան կազմակերպություններ: Զանգվածային լրատվամիջոցների դերը մարդու իրավունքների պաշտպանության գործում:

Կրկնություն (1 ժամ)

Քաղաքացիական կրթություն

Թեմա 3. Ժողովրդավարություն (3 ժամ)

Ժողովրդավարություն հասկացությունը: Անմիջական և ներկայացուցչական ժողովրդավարություն: Ընտրությունները՝ որպես սահմանադրական ժողովրդավարության իրականացման միջոց:

Թեմա 4. Քաղաքացիական հասարակություն (6 ժամ)

Քաղաքացիական հասարակություն. հասկացությունը, առանձնահատկությունները: Քաղաքացիական հասարակությունը և զանգվածային լրատվության միջոցները: Հասարակական կարծիքի ձևավորումը և բազմակարծության դերը քաղաքացիական հասարակությունում: Հասարակական կազմակերպությունների

դերը քաղաքացիական հասարակությունում: Լոբբիզմ: Մասնակցություն և առաջնորդություն: Կոռուպցիան, դրա պատճառները և ձևերը:

Թեմա 5. Հանրային իշխանություն (6 ժամ)

Իշխանության անհրաժեշտությունը: Պետական իշխանության ճյուղերը (օրենսդիր, գործադիր, դատական): Իշխանության սահմանափակման սկզբունքները (զսպումներ և հակակշիռներ):

Տարածքային կառավարում և տեղական ինքնակառավարում: Մասնակցությունը համայնքի կյանքին: Համայնքային հիմնախնդիրներ:

Ամփոփում (2 ժամ)

Պահուստային ժամաքանակ՝ 5 ժամ